

---

---

**ԳԱՐՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ**  
**Ի. ԿՈՒԼՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ**

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռ. Ա.

Ռուս նշանավոր առակագրի ստեղծագործությունները արևմտահայ պարբերականներում առաջին անգամ հայտնվեցին XIX դ. 40-60-ական թվականներից («Բազմավեպ», «Մասյաց աղավնի», «Ծաղիկ», «Մասիս» և այլն): Նրա մասին տպագրվում էին կենսագրականներ, ակնարկներ, վերլուծություններ, թարգմանությունների վերաբերյալ գրախոսություններ, որոնցում առակագիրը ներկայացվում էր ոչ միայն հայ-ռուսական գրական առնչությունների, այլև նշանավոր առակագիրների՝ Եզոպոսի, Պետրոսի, Լաֆոնտենի և մյուսների ստեղծագործությունների համեմատության և ավանդույթների շարունակության համատեքստում: Կարծում ենք՝ այդ մեծ հետաքրքրությունը պայմանավորված էր նաև հայության շրջանում հայ առակագիրների, նրանց ավանդույթների և ժառանգության լայն ու բազմակողմանի տարածվածությամբ:

Ի. Կոիլովի առակների թարգմանության առաջին փորձերն արվել են գրաբարով<sup>1</sup>, որոնց հաջորդել են գրական արևելահայերեն և արևմտահայերեն թարգմանությունները մեր մշակույթի այնպիսի նշանավոր ներկայացուցիչների կողմից, ինչպիսիք էին Խ. Աբովյանը, Գ. Այվազովսկին, Ղ. Աղայանը, Բ. Քուշներյանը, Հովհ. Թումանյանը, Աթ. Խնկոյանը և ուրիշներ: Քչերին է հայտնի, որ 1870 թ. Կ. Պոլսում տպագրվել է նաև Կոիլովի առակների արևմտահայերեն ժողովածուն, որը կազմել, թարգմանել և հրատարակել է Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին՝ նշանավոր ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու եղբայրը: Հախուռն կյանք՝ լի վերելքներով և վայրէջքներով, հակասություններով և ճշմարտության որոնումներով, բեղուն, ազգանվեր գործունեություն (որը հաճախ սխալ է գնահատվել ու ներկայացվել) հայկական գաղթօջախներում, իսկ ավելի ճիշտ՝ մշակութային կենտրոններում: Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին գիտական և մանկավարժական լայն գործունեություն է ծավալել Վենետիկում (Ս. Ղազարում), Փարիզում, Կոստանդնուպոլսում, Ղրիմում, Էջմիածնում, Թիֆլիսում: 1850-ական թվականներից նրա մասին գրական, քննադատական, ակնարկային և բանավիճային բնույթի հոդվածներ են տպագրվել և՛ արևելահայ, և՛ արևմտահայ պարբերականներում: Այսօր, գրեթե 125 տարվա հեռավորությունից, երբ նորից թերթում ես արդեն խունացած և, թվում է, թե մոռացության գիրկն անցած այդ նյութերը, բոլորովին նորովի ես գնահատում հայրենասեր և ազգասեր մեծ գիտնականին և մտավորականին, որի ամբողջ կյանքը, ըստ էության, նվիրում է եղել իր ժողովրդին, հայրենի գիտությանն ու մշակույթին:

---

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Հաջյան Լ.**, Կոիլովի առակների առաջին հայ թարգմանիչները (ՀՄՄՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, N 9, էջ 61-71):

Անցյալ գրեթե մեկ դարի ընթացքում, հատկապես խորհրդային տարիներին, դպրոցական դասագրքերից սկսած մինչև հայագիտական լուրջ հոդվածներն ու ուսումնասիրությունները, մենք ավելի շատ հանդիպում ենք Գ. Այվազովսկուն ուղղված «հետադիմական», «կղերական», «պահպանողական» (նսեմացնող իմաստով) բնութագրումներին, քան որևէ դրական գնահատականի: Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու գրական ու գիտական վաստակը վերագնահատելիս պարզվում է, որ շատ հաճախ ժամանակն ու պատմությունն անարդար են եղել նրա հանդեպ: «Հյուսիսափայլ» (Մոսկվա), «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), «Մեղու» (Կ. Պոլիս) պարբերականների էջերում հասարակական պայքարի տեսանկյունից քննադատվել է «Մայայց աղավնի» (Փարիզ, ավելի ուշ՝ Թեոդոսիա) հանդեսի խմբագիր Գաբրիել Այվազովսկին՝ մոռացության մատնելով նրա այն մեծ, ազգանըվեր գործերը, որոնք կատարել էր Մխիթարյան վարժարանում դասավանդելու տարիներին (նա 14-ից մինչև 30 տարեկանը սովորել և աշխատել է ս. Ղազարում), երբ միաժամանակ նաև 1843 թ. իր հիմնադրած «Բազմավեպ» ամսագրի խմբագիրն ու գլխավոր աշխատակիցն էր (Փարիզի Մուրատյան վարժարանի տեսչի պաշտոնում՝ 1848 թ.): 1855 թվականից նա «Մասեաց աղանի» պատկերագարդ հայերեն և ֆրանսերեն հանդեսի խմբագիրն էր: Գ. Այվազովսկին այնուհետև Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդն էր, Խալիպյան վարժարանի հիմնադիր-տեսուչը (1865 թ.), Գևորգյան ճեմարանի տեսուչը (1875 թ.), Ներսիսյան և Հովհաննես Մարիամյան դպրոցների հովանավորը (1879-1880 թթ.) և այլն:

Գիտամանկավարժական, հրապարակախոսական լայն գործունեությանը զուգահեռ՝ Գ. արք. Այվազյանը նաև եկեղեցական, հասարակական-քաղաքական գործիչ էր, ուներ իր սկզբունքները, ազգային հարցերի վերաբերյալ իր ուրույն պատկերացումները: Ինչ խոսք, կարելի է տասնյակ օրինակներ բերել նրա գուցեև պահպանողական պատկերացումների, հայացքների կամ վարքագծի վերաբերյալ, սակայն անհնար է անտեսել նրա հայագիտական, պատմագիտական և մանկավարժական ուսումնասիրությունները, որոնցից շատերը, ցավոք, չեն պահպանվել: Մի շարք հին և նոր լեզուների՝ եբրայերենի, հունարենի, լատիներենի, արաբերենի, պարսկերենի, իտալերենի, ֆրանսերենի, անգլերենի, ռուսերենի բացառիկ իմացությունը տաղանդավոր գիտնականին ու մանկավարժին հնարավորություն էր տալիս իր սաների առջև բացելու գրականության զարմանալի աշխարհը, ծանոթացնելու համաշխարհային գրականության նշանավոր ներկայացուցիչներին, իր հիմնադրած «Բազմավեպ», «Մայայց աղավնի» ամսագրերում տպագրել ռուս և համաշխարհային գրականության գոհարները, փորձել ուժերը թարգմանության բարդ ու դժվարին գործում:

Գ. Այվազովսկու թարգմանությունների մասին 1872 թ. «Արևելյան մամուլում» Կամսար ստորագրությամբ տպագրվում է հոդված, որտեղ հեղինակը գրում է. «Գրականութեան մեջ առակը նշանաւոր տեղ մը կ'ընէ և մեծ ներգործութիւն ունի ժողովրդոց մտաց և բարուց վրայ՝ իբրև զուարճալի և միանգամայն ազդեցիկ խրատ և յորդոր ՚ի բարին... Ի. Քոչիլովի առակները գեր. Գ. Այվազեանի շնորհիւ ամբողջ թարգմանուած են ՚ի հայ աշխարհիկ բարբառ՝ Արամեանի մաքուր տպագրութեամբ: Քանի որ Մխիթար Գոշին կտրուկ և մութ առակներէ զատ

առակներ չունինք, քանի որ ազգային ոգու վեր վիճակի վերաբերությամբ գրող առակախօս մը տակալին երեսն չելաւ մեր մէջ, ինչպէս գրականութեան ուրիշ ճիւղեր՝ այս ճիւղն ալ թարգմանութեամբ փոխ առնելու համար օտարին դիմելու հարկ կար: Սակայն այս անգամ օտարը ռուս է, և ի՞ հարկէ կ'յուսայի տեսնել Քոիլովի սրտին հայլին...»<sup>2</sup>:

Այս ժողովածուի հրատարակությանը, անշուշտ, ինչպէս արդէն նշեցինք, նախորդել է ստեղծագործական որոնումների մի շրջան, որի շնորհիվ Գ. Այվազյանը 1866 թ. Թեոդոսիայում հրատարակել է «Հատընտիր առակք Քոիլովի» ժողովածուն: Առաջաբանում նա գրում է. «Մէք այս գրքոյկին մէջ Քոիլովի առակներէն մէկ մասին ոչ թէ հետեւողութիւն կամ նմանողութիւն ընել ջանացինք, այլ ըստ կարի հաւատարիմ թարգմանութիւն, եւ այն գլխաւորապէս Ռուսաստանի դպրատանց մէջ սովորող հայ պատանեկաց համար, որպէս զի նոքա առակի մը ռուս բնագիրը սերտած ժամանակները, ինչպէս որ սովորութիւն է, անոր հայերէնն ալ եթէ չսերտեն՝ գէթ աչքերուն առջեւն ունենան»<sup>3</sup>:

Նա անդրադառնում է դաստիարակչական այն մեծ ու կարևոր դերին, որ կարող է ունենալ Կոիլովի առակների ճիշտ և բազմակողմանի ուսուցումը՝ միաժամանակ նշելով, որ «ազգային արդի մատենագրութեան մէջ կաւելանայ Քոիլովի պէս ընտիր հեղինակի մը առակներուն մէկ ամբողջ թարգմանութիւնը»<sup>4</sup>: Ժողովածուում տպագրված են 159 առակ, որոնք հետագայում՝ 1870 թ., ընդգրկվեցին մեկ ամբողջական ժողովածուի մէջ: Միաժամանակ, նրա, ինչպէս և հետագայում Ք. Քուշներյանի հետաքրքրությունների տեսադաշտում են եղել այլ ժողովուրդների առակները, որոնց վերաբերյալ Գ. Այվազովսկին հրատարակել է գրքեր՝ «Առակք խրիմցոց լեզուով» (Ռոստով, 1875), «Հազար ու մի առակաւոր բանք» (ժողովածու, Կ. Պոլիս, 1875):

Գ. Այվազովսկու՝ Կոիլովի առակների արևմտահայերէն թարգմանությունների ընդգրկումն ժողովածուն (մոտ 305 առակ), ինչ խոսք, իրադարձություն էր հայության մշակութային կյանքում: Ժողովածուում զետեղված են նաև թարգմանչի առաջաբանը, ինչպէս նաև ռուս հայտնի գրականագետ, Կոիլովի ժամանակակից և կենսագիր Պ. Պլետնյովի՝ առակագրին նվիրված կենսագրական, մասամբ նաև վերլուծական բնույթի հոդվածը: Գրքի առաջաբանում Գ. Այվազովսկին մասնավորապէս գրում է. «Քոիլովի առակներուն հայերէն աշխարհաբառ թարգմանութիւնը ժամանակ առ ժամանակ հրատարակելով նախ Բազմավէպին մէջ, և ապա առանձին տետրակով, արդէն համոզուած էինք թէ երբեւիցէ պիտի հարկադրիմք թարգմանել նաեւ մնացեալ առակները և ամբողջը հրատարակել, վասն զի բաւական ախորժելի երեւցեր էր մերազնեայ ընթերցողաց այս երկասիրութիւնը»<sup>5</sup>:

<sup>2</sup> Տե՛ս Կամսար, Առակք Քոիլովի թարգմանութիւն գեր. Գ. Այվազեանի (Արեւելեան մամուլ, Զմիւռնիա, 1872, թիւ 2, էջ 65-67):

<sup>3</sup> Հատընտիր առակք Քոիլովի թարգմ. յաշխարհիկ բարբառ, Թեոդոսիա, 1866, էջ Գ:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Այվազեան Գ., Առակք Յովհաննու Քոիլովի, Կ. Պոլիս, 1870, էջ Է: Այսուհետև այս ժողովածուից արվող մեջբերումների էջերը կ'նշվեն տեքստում:

Անդրադառնալով թարգմանչի աշխատանքին՝ նա նշում է, որ դրանց «դատաստանը» կարող է անել յուրաքանչյուր ոք, ով կցանկանա դրանք համեմատել ուրիշ թարգմանությունների և հատկապես ռուսերեն բնագրի հետ: Չփորձելով բացառիկ համարել իր թարգմանությունները՝ նա միաժամանակ վստահությամբ գրում է. «Երկու լեզուաց եւս ոյժը հասկցող բանագետք կվկայեն անաչառութեամբ, թէ նախ՝ մեր թարգմանութիւնը ուրիշներէն աւելի մօտիկ ու հաւատարիմ է բնագրին, և երկրորդ՝ տեղ-տեղ հեղինակին իմաստը մեր աշխարհաբառին վերածուած ժամանակը կարծես թէ աւելի գեղեցկութիւն առած է» (Է):

Գ. Այվազովսկին կարևոր է համարում նաև ինչ լեզվով թարգմանելու հարցը, քանզի այդ տարիներին կատաղի պայքար էր մղվում գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև: Բարձր գնահատելով գրաբարը, որպես առավել կատարյալ լեզու, նա հասկանում էր, որ առակները պետք է թարգմանել ժամանակակից խոսակցական լեզվով, քանի որ «գրաբարով, որ այժմ ոչ էւս խօսակցութեան լեզու է մեր ազգին մէջ, շատ դժուարին է (չասեմ թէ անհնարին) դուրս ցատքեցընել բնագրին *կենդանի ու վառվռուն* դարձուածքները անոր համար, եթէ բաղձայինք էւս գրաբար թարգմանել այս առակները, ինչպէս որ մէկ քանին արդէն թարգմանած ու հրատարակած ենք նաեւ մենք, դժուարութիւնը մեծա-պէս արգելք կլինէր» (Ը): Նա կարծում էր, որ իր թարգմանությունները պետք է հասկանալի լինեն ոչ միայն «չափահասից և ուսումնականց, այլ տղայոց և ռամկաց՝ արանց և կանանց, որ կարօտ են դիւրիմաց գրուածոց» (Ը):

Միաժամանակ, Գ. Այվազովսկի թարգմանիչը կոնկրետ նշում է իր ընտրած լեզուն՝ «Այսու սկզբամբ ջանացինք նաեւ այս մեր աշխատութեան մէջ ընդհանրապէս չհեռանալ *Տաճկաստանի Հայոց մաքուր աշխարհաբառէն* (ընդգծումը մերն է - Տ. - Գ. Ռ.), ուր որ իմաստին ցոլք ու կենդանութիւն տալու բաղձանքէն ստիպուեցանք՝ չդանդաղեցանք նաև ուրիշ աշխարհաբառերու, էւս և հասարակ տաճկերէնի խօսքեր, ոճեր, մասնիկներ փոխառութեամբ ի գործ դնելոյ...» (Ը): Նա ընդունում էր այն սկզբունքը, որ լավ է «գոհել երբեմն մեր անկանոն աշխարհաբառին յստակութիւնը առակաց ճիշտ թարգմանութեան, քան թէ թարգմանութեան ճշտութիւնը յստակաբանութեան»: Խոսելով Կոչիլովի առակների լեզվի և ոճի մասին թարգմանիչը կարծում է, որ դրանք սուր և բնական խոսքով են գրված, որով հեղինակը կարողացել է տալ ազգային բնավորության և սովորությունների ճշգրիտ պատկերը: Գ. Այվազովսկին կարծում էր, որ որոշ դեպքերում թարգմանիչը պետք է տողատակերում բացատրություններ տա՝ «առակին իմաստը աւելի պարզելու համար» (Թ):

Ի. Կոչիլովի առակների հայերեն թարգմանությանն անդրադարձել է Ա. Տերտերյանն իր «Ռուս մեծ առակախոս բանաստեղծը» գրքում: Նա Աբովյանից հետո Կոչիլովի առակների երկրորդ թարգմանիչ է համարում Գ. Այվազովսկուն (նկատի չունենալով գրաբարով կատարված թարգմանությունները): Եվ որքան էլ որ նախախորհրդային և խորհրդային տարիներին Գ. Այվազովսկուն համարում էին «թունդ կղերական», որը «Հյուսիսափայլի» թշնամին էր և Նալբանդյանի հակառակորդը, այնուամենայնիվ, Ա. Տերտերյանը՝ որպես ծանրակշիռ գիտնական, չէր կարողչնշել նրա՝ բացառիկ գիտնականի, հատկապես լեզվագետի

արժանիքները. «Այդ թարգմանությունը ցույց է տալիս Այվազովսկու լեզվական ընդունակությունը, նա լավ գիտեր ոչ միայն գրաբարը (նրա աշակերտներից էր Ղ. Ալիշանը), հայ բարբառները, այլև հին և նոր բազմաթիվ լեզուներ (15 լեզու գիտեր) ... նա ժամանակի այն հազվագյուտ մարդկանցից էր, որ շատ լավ գիտեր մեր գրական լեզվի մեջ մտնող բոլոր բաղկացուցիչ տարրերը՝ գրաբար, բարբառներ, օտար լեզուներ»<sup>6</sup>: Ինչպես նշում է Ա. Տերտերյանը, Գ. Այվազովսկին հրաշալի թարգմանություններ է արել, որոնք ոչ միայն նվաճել են մայրենի լեզվի դասագրքերի էջերը, այլև գրավել են թերևս և դեմ գրախոսների ուշադրությունը՝ սկսած 1870-ական թվականներից մինչև 1890-ականի վերջը:

Նշելով Գ. Այվազովսկու հաջողված թարգմանությունները, տալով դրանց համառոտ գնահատականները՝ Ա. Տերտերյանը չի կարողացել խուսափել մեծ հայագետի մասին եղած բացասական բնութագրումներից, որոնցում նկատելի են հաճախ կողմնակալ տարածված կարծիքներ: Այսպես, մի կողմից բարձր գնահատելով մոտ 12 առակների թարգմանությունը՝ նա նշում է նաև թարգմանական թերություններ, որոնք, ըստ նրա՝ արդյունք են «այդ կղերամուլի» հայացքների: Կռիլովի առակները, ինչպես գրում է Ա. Տերտերյանը, նա փորձել է օգտագործել «բարձրացող դեմոկրատական շարժման դեմ»՝ հատկապես ընդգծելով Կռիլովի «Անաստվածներ», «Մարիկ և ոգնի», «Առյուծ և հովազ», «Մատենագետ և ավազակ» առակները: «Ջարմանալի չէ,- գրում է Տերտերյանը,- որ կղերական թարգմանչի մտայնությունը մուտք է գործել իր թարգմանության մեջ, որոշ դեպքում աղավաղել մեծ առակախոսի դեմքը»<sup>7</sup>:

Կարծում ենք՝ այսօր պետք է շատ ավելի զգույշ վերաբերվել Գ. Այվազովսկու թողած ժառանգությանը, ինչպես նաև թարգմանություններին, վերանայել եղած կարծիքները և ըստ արժանվույն արժեքավորել նրա գրական գործունեությունը՝ թարգմանական այն բացառիկ վարպետությունը, որը դրսևորել է նա Կռիլովի 300-ից ավելի առակներ թարգմանելիս, գնահատել այն մեծ կրթական, մասնավորապես դաստիարակչական նշանակությունը, որ ունեցել են դրանք հայության շրջանում:

Արդ, լեզվառճական և գեղագիտական ինչ սկզբունքներով է առաջնորդվել Գ. Այվազովսկին թարգմանական իր դժվարին աշխատանքում: Ինչն է արժանի ուշադրության, և ինչը կարող է այսօր էլ, բացի գրական-պատմական փաստ լինելուց, օգտակար լինել ազգային թարգմանության տեսության զարգացման և արևմտահայ գրական ժառանգության բազմակողմանի գնահատման համար: Երբ Կռիլովին հարցրել են, թե ինչու է ընտրել առակի ժանրը, նա պատասխանել է. «Այս ձևը հասկանալի է բոլորին, այն կարողում են և՛ ծառաները, և՛ երեխաները»<sup>8</sup>: Եվ իսկապես, առակը ոչ միայն սերտորեն կապված է ժողովրդական միջավայրին, այլև այլաբանության շնորհիվ օգնում է բացահայտել կյանքի ճշմարտությունը: Առակներն ունեն սյուժետային երկու հակադրվող մասեր՝ պատմողական, որը ներկայացնում է հիմնական ելակետային իրադրությունը, և սուր, անսպասելի,

<sup>6</sup> Տերտերյան Ա., Ռուս մեծ առակախոս-բանաստեղծը, Ե., 1944, էջ 76:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>8</sup> Вигель Ф. Ф., Записки, т. 2, СПб., 1892, с. 51.

հակադրության վրա հիմնված ավարտ կամ վերջաբան, որը և բացահայտում է պոեմի իմաստը՝ գաղափարը, հեղինակի տեսակետը<sup>9</sup>:

Բ. Կոիլովի առակների կարևոր առանձնահատկություններից է առաջին հայացքից պարզ թվացող ոճը. հանգիստ, պարզունակ պատմությունը հաճախ միջոց է դառնում ընդգծելու առակի ենթատեքստում թաքնված երգիծանքը: Առակի պարզ ու անպաճույճ պատմությունը ենթատեքստում երբեմն թաքցնում է գրողի սուր ծաղրը, քննադատությունը:

Ժողովրդական դիպուկ, սրամիտ խոսքը, հումորը թարգմանվող լեզվում վերստեղծելը, բնականաբար, թարգմանչի առաջնային խնդիրներից պետք է դառնա: Գ. Այվազովսկին, իսկապես, խոսքի վարպետ է, նա զգում է լեզուն, կարողանում է նոր ձևավորվող աշխարհաբարով ստեղծել համարժեք, գունեղ թարգմանություն: Ընդգծված հեզնանք կա, օրինակ, «Կատուն ու խոհարարը» առակում, որտեղ անաչառորեն պատմվում է «կրթված-գրագետ» խոհարարի վարքագծի մասին, որը սիրում է երբեմն պանդոկ մտնել, խմել և մոռանալ օրենքները.

Какой-то повар-грамотей  
С поварни пробежал своей  
В кабак (он набожных был правил  
И в этот день по куму тризну правил)<sup>10</sup>.

Թարգմանված է՝ «Խոհակեր եւ կատու».

Խոհակերին մէկը կար՝ իրեն համար կարդացող,  
Կարդումնքէն ալ աւելի՝ իրեն արհեստը գիտցող.  
Սա չեմ գիտէր ինչպէս կըլլայ՝  
Սանահարին խօսքովը թէ փողովը  
Մէկ իրիկուն մը կելնէ կերթայ  
Գինետունին ժողովը.  
Խոհակերոցին ըսես պահապան՝  
Մըկանց դեմ կատուն կըձրգէ աղան (145):

Առաջին հայացքից օրինապահ և ուսյալ բնութագրվող խոհարարը, պարզվում է, որ հարբեցող է, չնայած այդ մասին ասվում է ակնարկով՝ գրքային վերամբարձ դարձվածքով, սանահոր համար խնջույք էր կազմակերպել: Հնչերանգային այս հանդիսավորությունն էլ կարծես թե թաքցնում է խոհարարի թուլությունը խմիչքի հանդեպ: Չարմանալի չէ, որ ինքը կատվին թողել է “стеречи съестное от мышей” (խոհակերոցին ըսես պահապան՝ մկանց դեմ կատուն կըձրգէ աղան). խոհարարի տեսանկյունից բավական խելացի մի միջոց, որի անհեթեթությունը երգիծում է

<sup>9</sup> Вандт Л., *Басня как литературный жанр, вып. III, Л., 1927, с. 88.*

<sup>10</sup> Крылов И. А., *Басни, Л., 1954, с. 7.* Բ. Կոիլովի առակների ոուսերեն բոլոր մեջբե-րումներն արված են ըստ այս հրատարակության: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

հեղինակը: Այն տխուր տեսարանը, որին ականատես է լինում խոհարարը վերադառնալուց հետո՝ “объедки пирога”, լրացվում է կատվի դիրքով և պահելաձևով՝ “мурлычит и трудится над курчонком”: Եվ հեղինակի կիսակատակ, հեգնական, ուրախ պատմությունն ավարտվում է խոհարարի բազմանշանակ ճառով, որը հռետորական արվեստի հրաշալի օրինակ է.

... Как! Был честным Котом до этих пор,  
 Бывало за пример тебя смиренства кажут,-  
 А ты ... ахти, какой позор!  
 Кот Васька плут! Кот Васька вор!  
 И Ваську-де не только что в поварню –  
 Пускать не надо и на двор,  
 Как волка жадного в овчарню:  
 Он порча, он чума, он язва здешних мест!

Ինչպես տեսնում ենք, ոչ մեծ ծավալի առակում Կոնիլովը օգտագործում է մի քանի ոճ, բառակապակցություններ և արտահայտություններ, որոնք խոսքի տարբեր ոլորտներին են վերաբերում՝ ժողովրդախոսակցականից մինչև եկեղեցական-քարոզչական, անգամ ընտրել է ավետարանական արտահայտություն (“как волка жадного в овчарню”), եկեղեցական-սլավոնական բառեր՝ “порча”, “язва”: Եվ խոհարարի խոսքի այս ամբողջ անմտությունն ու կոմիզմն ավարտվում են հեղինակի ծանրակշիռ խոսքով.

Но что ж? Пока его он пел,  
 Кот Васька все жаркое съел.

Հնչերանգի այս խիստ տարբերությունը խոհարարի հանդիսավոր ճառից հետո ընթերցողին վերադարձնում է իրերի իրական վիճակին՝ խորությամբ ընդգծելով գործով չհաստատված պերճախոսության ունայնությունը: Ինչ խոսք, միայն հմուտ ու բանիմաց թարգմանիչը լեզվական և ոճական բացառիկ իմացությամբ կարող է զգալ և վերստեղծել այս բոլոր նրբերանգները, խոսքային անցումները, վատ ու տիպական պատկերներ: Գ. Այվազովսկու թարգմանությունը, կարծում ենք, աչքի է ընկնում իր գունեղությամբ, խոսքի դիպուկությամբ, կենցաղային բներանգի պատկերավոր վերստեղծմամբ.

Դառնայ տուն գայ, տեսնե՛ որ ինչ կրնայիս.  
 Կարկանդակը կըտոր կըտոր  
 Գետին թափած անդին ասդիս,  
 Բամբուլ կատուն խոլոր մոլոր  
 Կըկզած հեռուն տակառի մը ետեւ  
 Մըմըռալով կը կըրծէ խորոված հաւը:

Կատվի Васька անունն այստեղ փոխարինվել է կոմիկական *Բամբուլիկով*, ռուսական “жаркое”-ն՝ «խորոված հավով», հատկապես գունեղ են կատվին ուղղված խոհարարի բնութագրումները՝

Այ անըզգամ Բամբուլիկ,  
Այ որկրամոլ կախուլիք,

կամ՝ խոսակցական լեզվում օգտագործվող «պատն ականջ ու ասք ունի» է վերստեղծել նաև խոհարարի ճառը, կատվին ուղղված երգիծական բնութագրումները.

Քեզ ատենով խելօքութեան կը բերէին օրինակ,  
Հիմա դուն, թիւ աներէս,  
Ինքըդ խաղք ու խայտառակ,  
Ինձ ալ ամօթ կը բերես,  
Դըրացիներն որ լըսեն՝  
Գիտես ինչեր պիտի ըսեն.  
Բամբուլ կատուն խարդախ ու գող է եղեր,  
Բամբուլը ոչ թե մառան,  
Ոչ ազպարը պէտք է թողուլ՝ ոչ առան.  
Նա կատու չէ, գայլ է անգութ, չար գազան,  
Ոչխարներէն հեռու Բամբուլն անպիտան,  
Նա Բամբուլ չէ, պատիժ, կըրող ու մահ է:

Գ. Այվազովսկին ժողովրդական դիպուկ առածով է ավարտում հեղինակի խոսքը.

Тут ритор мой, дав волю слов течению, Не находил конца нравоучению. Но что ж? Пока его он пел, Кот Васька все жаркое съел.	Մեր ճարտասանը լեզու թափելով Խիստ շատ բան ըսաւ հելքով փրր- փրրալով, Բայց ի՞նչ օգուտ, զուր էր սըրհինգ փըշած Բամբուլիկը կերաւ լափեց խորովածը:
--	--

Կռիլովի ստեղծած բնավորություններն ու կերպարները այուժեի զարգացման շնորհիվ ընթերցողի առջև բացահայտում են ծաղրն ու երգիծանքը, որոնք վերջում վերածվում են սուր սատիրայի: Գ. Այվազովսկու թարգմանության մեջ այդ անցումները լիովին համարժեք են, նույնքան գունեղ, պատկերավոր և արտահայտիչ, ինչպես բնագրում:

Ի. Կռիլովի առակների խոսքային արտահայտչականության կարևոր առանձնահատկություններից մեկը դարձվածքների, առածների և ասացվածքների օգտագործումն է: Թարգմանության մեջ գտնված են դրանց հետաքրքիր համար-



ծեքները: Ինքնատիպ են նաև բարոյախոսական մասերը, որոնք սովորաբար առածի կամ դարձվածքի արժեք են ձեռք բերում: Օրինակ, «Էջը» առակի ավարտը.

В народах и чинах высота хо-  
роша,  
Но что в ней прибыли, когда  
низка душа ?...(60).

Աղէկ բան է ցեղն ազնիւ  
Բարձր աստիճանն ու պատիւ  
Բայց ատոնք ի՞նչ շահ ունին  
Երբ մէկուն ցած է հոգին (69):

Կամ «Գյուղական և օձը» առակում.

Да, кажется, голубушка моя,  
И потому с тобой мне не ужиться,  
Что лучшая Змея,  
То мне, ни к черту не годится (190).

Քո հետ ապրիլ ես չեմ կարծեր որ  
կըրնամ  
Չեմ լրսած որ սոխին անոյշը լինի,  
Օձին աղէկն ալ կըրողը տանի (198):

Թարգմանության մեջ Գ. Այվազովսկին փոխել է բառապատկերը, հեռացել է դիպուկ մոտենալու համար: Երբեմն էլ օգտագործել է բարբառային բառեր և արտահայտություններ, որոնք խոսքն ավելի դիպուկ են դարձնում: Նման դեպքերում նա տողատակում տալիս է բառի բացատրությունը՝ հիմնականում օգտագործելով «դրիմեցոց բարբառը»: Այսպես, “Музыканты” («Երաժիշտք») առակն ավարտվում է ասացվածք դարձած բարոյախոսությամբ.

А я скажу: по мне уж лучше пей,  
Да дело разумей (93), (44):

Իմ խրթիս – կուգես նե խըմիր,  
Բայց գործըդ գիտցիր

Տողատակում թարգմանիչը գրում է. «Բնագրին մեջ՝ ես կըսեմ. այսինքնն իմ կարծիքս այս է, թե... Նոյն իմաստով կը գործածեն խրիմեցիք իմ խրթիս բառը, որը կերևի թաթարաց պէնիմ խաթմըտու (իմ առջեւ) բառէն առած է» (44):

Թարգմանիչի համար որոշակի արժեք և նշանակություն ունի բառն իր իմաստային բոլոր նրբերանգներով, այն կոնկրետ նշանակությամբ, որը նպաստում է առակի գաղափարական բովանդակության դրսևորմանը, որը որոշակի դեր է կատարում հեղինակային ոճի ստեղծման համար: Նա կարողացել է բացահայտել յուրաքանչյուր կոնկրետ առակի իմաստային-գաղափարական բովանդակությունը, բառին տալ կոնկրետություն և լիարժեքություն:

Թարգմանական տեսակետից ուշադրության են արժանի “Демьянова уха”, “Муха и дорожные”, “Крестьянин в беде”, “Мешок”, “Слон и Моська” և այլ առակները, որոնցում առանձնահատուկ նշանակություն ունեն կենցաղային մանրամասները, բառի հնչերանգային նրբերանգները: Համարժեք թարգմանության շնորհիվ առակների հերոսները ևս կարողանում են պահպանել իրենց ռեալիստական գծերը: Այսպես, օրինակ, “Демьянова уха” առակում Կոխլովը

քննադատում է այն անտաղանդ բանաստեղծներին, ովքեր իրենց բանաստեղծություններով, խոսքով ձանձրացնում են ունկնդիրներին և ընթերցողներին.

Соседушка, мой свет!  
Пожалуйста, покушай”.  
“Соседушка, я сыт по горло”,- “Нужды нет,  
Еще тарелочку, послушай... (202).

Հոգիդ սիրես, կընքահայր,  
–Անոյշ ըրէ, հրամէ, կեր.»  
Խիստ շատ կերայ, սանահար,  
Մինչեւ սըտէ դս է հասեր :-  
«Հոգ չէ, պընակ մ’ալ հրամէ  
Ասի չուտելու բան չէ (213):

Այսպես Դեմյանը հարևան Ֆոկային ստիպում, պարտադրում է իր պատրաստած ուխան ուտել՝ նրան ո՛չ ժամանակ և ո՛չ էլ հանգիստ տալով, իսկ խեղճ Ֆոկան՝ քրտնաթոր, վերջին ճիգերն է գործադրում դիմանալու համար այդ ճնշմանը և վերջապես.

Схватил в охапку  
Кушак и шапку,  
Скорей без памяти домой  
И с той поры к Демьяну ни ногой (204).

Այս որ լըսեց, ինչ ընելը չը  
գիտցաւ,  
Գըտակն ու գօտին առնել փախչիլ  
մէկ ըրավ (214):

Ինչպես տեսնում ենք, սա թարգմանական որոշակի լուծումներ պահանջող առակ է, որտեղ նախ պետք է պահպանել կառուցվածքային ամբողջությունը, երկխոսությունը, ողջ կոմիզմը, կենցաղային մանրամասները, որպեսզի բառային բներանգի միջոցով վերստեղծվեն հերոսների կերպարները, բնավորությունները: Այստեղ յուրաքանչյուր բառ նաև պատկեր է, կրում է հոգեբանական-հուզական ծանրաբեռնվածություն: Ուշագրավ է, որ հայ ընթերցողին ավելի մոտ և հասկանալի դարձնելու համար, այն էլ XIX դ. 60-ական թվականներին, երբ ռուսական միջավայրի և կենցաղի հետ հաղորդակցության մասին խոսք անգամ չէր կարող լինել, Գ. Այվազովսկին ազգային որոշակի բառ-իրողությունները (реалия) նախընտրել է վերստեղծել հայ ընթերցողին ավելի մոտ ու հարազատ համարժեքներով: Հենց վերնագրից արդեն թարգմանիչը դրսևորում է իր հիմնական սկզբունքը. այնպես թարգմանել, որպեսզի ընթերցողին ծանոթ և հասկանալի լինի: Ահա թե ինչու վերնագիրը թարգմանել է «Թաթուլին գալաճօշը»՝ տողատակում տալով դրա բացատրությունը. «Բնագրին մէջ ուխա է, այսինքն ձկնաթան, կամ ձուկով ապուր, մենք գալաճոշ դրինք՝ իբրև Հայաստանցւոց ծանօթ ապուր, որ չուրթանով, մսով, խիստով, սոխով ու սխտորով կեփուի» (213): Անունների հարցում ևս նա գերադասել է հերոսներին հայկական անուններ տալ՝ Թաթուլ և Խչո: Անգլիացի հայտնի գրող, թարգմանիչ Բեռնարդ Պերսը, որը Կոնիլովի առակների լավագույն թարգմանիչներից էր<sup>11</sup>, գտնում էր, որ թարգմանիչը պետք է

<sup>11</sup> Բ. Կոնիլովի առակների անգլերեն առաջին թարգմանությունները կատարել են 1869 թ.՝ Վ. Ռալստոնը, 1883 թ.՝ Գ. Հարիսոնը, 1927 թ.՝ Բ. Պերսը և ուրիշներ:

ծանոթ լինի գրողի գեղարվեստական նկարագրին, նրա ներշնչանքին, որպեսզի թարգմանվող հեղինակն օտար ընթերցողի մեջ բուլբուլին ինքնուրույն կյանքով ապրի: Ուստի, նրա կարծիքով, անգլիացի Կոնիլդը պետք է բնագրից տարբերվի այնքան, որ հասկանալի լինի ընթերցողին: Գ. Այվազովսկու նման Բ. Պերսը հաճախ փորձ է արել ստեղծել Կոնիլդի առակների հերոսների անգլերեն համարժեքները, որոնք օժտված են ազգային, կենցաղային մանրամասներով: Օրինակ, վերը նշված առակում Դեմյան և Ֆոկա անունները Բ. Պերսը ևս փոխարինել է անգլիական անուններով՝ *John և Master Tom*, անուններ, որոնց շատ կարելի է հանդիպել անգլիացի գյուղացիների շրջանում, կամ կենցաղային այնպիսի մանրամասն, ինչպիսին *ռիսան է*, թարգմանիչը փոխարինել է անգլիացիներին ծանոթ ձկնատեսակներով՝ «*Here's perch (окунь) and here's a piece of trout (форель)*»: Գ. Այվազովսկին դիպուկ հումորով է ընտրել բառերը՝ ժողովրդախոսակցական լեզվի գունեղ նրբերանգներով կարողացել է հաղորդել կոմիկական ամբողջ իրադրությունը՝ թեթև հումորից հասնելով մինչև հեղինակի խոսքում արտահայտվող սուր ծաղրը, որը դատավճռի նման ուղղված է բոլոր կարծեցյալ գիտուններին, ովքեր տեղին և ժամանակին չեն կարողանում լռել, չեն կարողանում խնայել դիմացինի ականջը և նման են «Թաթուլի գալաճօշին»:

Անշուշտ, թարգմանության ժամանակակից շատ տեսաբաններ կարող են փաստել, թե ռուսական ազգային բներանգը կամ կոլորիտը պահպանված չեն, սակայն, կարծում ենք, որ առանձին առակների թարգմանության ժամանակ կարելի է առաջնություն տալ գաղափարական բովանդակությանը, խոսքային կոլորիտին:

Գ. Այվազովսկու ուշադրությունից չեն վրիպել թարգմանական այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են տաղաչափական, ռիթմային, հնչերանգային համարժեքությունը, բանահյուսական խորհրդանիշների պահպանումը, ժողովրդախոսակցական լեզվի, խոսքի պատկերավորման միջոցների վերստեղծումը, ինչպես նաև քերականական անթարգմանելի ձևերը հնարավոր զուգահեռներով փոխարինելը: Յուրաքանչյուր դեպքում նա ընտրել է իր ինքնատիպ տարբերակները, դիմել նաև թարգմանության տեսության թույլատրելի սկզբունքների (պատճենման, նկարագրական թարգմանության) օգտագործման: Ինչ խոսք, այս բարդ ու դժվարին գործում եղել են նաև բացթողումներ, իմաստային անճշտություններ, բանաստեղծական տողի ավելացում կամ նվազեցում, առակի ընդհանուր ծավալի ընդարձակում, երբեմն նաև ազգային բներանգի տեղայնացում և այլն: Սակայն այս ամենը բնավ չեն նսեմացնում այն մեծ գործը, որն արել է Գաբրիել Այվազովսկին: Ի. Կոնիլդի առակների հայերեն թարգմանություններն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, պատկերայնությունը և արժանի են հայ ընթերցողի և հատկապես մտավորականության անաչառ ուշադրությանը: Ուստի ոչ միայն պետք է ըստ արժանվույն գնահատել մեծ հայի, գիտնականի ու մանկավարժի ազգանվեր գործունեությունը, այլև Ի. Կոնիլդի առակների հայերեն թարգմանությունները համարել հայ-ռուսական գրական առնչությունների պատմության մնայուն էջերի մեկ մասը:

**АРХИЕПИСКОП ГАБРИЭЛЬ АЙВАЗОВСКИЙ –  
ПЕРЕВОДЧИК БАСЕН И. КРЫЛОВА**

ТЕР-ГРИГОРЯН Р. А.

**Резюме**

Архиепископ Габриэль Айвазовский (1812-1880) – ученый, общественно–политический и церковный деятель, педагог, редактор журналов “Базмавеп” (Венеция) и “Масяц агавни” (Париж – Феодосия) – принадлежал к плеяде выдающихся деятелей XIX века. Однако мало кому известно, что он был и замечательным переводчиком. В 1870 г. в Константинополе был издан сборник басен И. Крылова в переводе Г. Айвазовского. Его перу принадлежат более 350 переводов басен, изучение которых раскрывает новые грани его творческой биографии.

Западноармянские переводы Г. Айвазовского восполняют еще одну страницу армяно-русских литературных связей.